

• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ •

ԳՈՒՐԳԵՆ-ՀՈՎՆԱՆ

Յ Ի Վ Ա

• Պ Ե Տ Դ Ր Ա Տ •

891.99

Հ-86

14 FEB 2011

№ 14

ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻՍ

№ 14

891.99

Z-86

այր.

ԳՈՒՐԳԵՆ-ՇՈՎՆԱՆ

1010
42870

8 Ի Վ Ա

(Արձույնի բաժնատերերի միություն)



ՊԵՏՏՐՈՍ

ՅԵՐԵՎԱՆ

Պետերբուրգի տպագրատուն
 Գլխավոր № 7610 (P)
 Պատվեր № 8617
 Հրատ. 2332
 Ֆիրմա 2000

△

ԳԵՏԻ ՀՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋ...

(ՁՈՐԱԳԵՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԵՐՈՍՆԵՐԻՆ)

Ток молодости — он
 электроток!
 Моя Республика
 им воды поборода.
 И этот ток
 теперь на долгий срок
 Подшефный
 Ленинского Комсомола.
 А. Безыменский.

1.

Յերկանր—յերկանր նստում եյի քո անարև ափերին,
 նստում, նայում եյի քեզ, նայում ու մանուկ միտք
 տարվում եր քեզնով:

Յես լուում եյի, պահում շունչս ու մնում արձանա-
 ցած քո առաջ:

Գո լափուները համառ եյին, կատաղի.—տեսնում
 եյի, թե ինչպես խելաոորեն զարնվում եյիր քո քար-
 քարոտ ափերին, պոկում այնտեղից թփեր, քարեր,
 ավազոտ ու վալրազ աղմուկով խառնում այդ բոլորն
 իրար, սղմում հարվածներիդ տակ ու ժեռ բարձրու-
 թյուններից ցած թափելով, տանում եյիր հեռուն...
 հեռուն...

Դու անեղ եյիր:

Մարտուն եյիր թափանցում չերաղներս ու աչքերս
փակում եյի քո առաջ:

Առյուծամուկն ձայներդ այնպիսի անհղութամբ
եյին հասնում ականջներիս, վոր կարկամում եյի սար-
սափից ու դողում՝ ինչպես ցրտից:

Յերբեմ պղտորվում եյիր դու, ջինջ ալիքներդ ուռ-
չում եյին, բարձրանում, ու ավազախառն մութ պատ-
կերիդ վրա չար մտքեր եյի կարդում չես:

Յես գիտեյի, վոր քո լափուների մի թեթև հար-
վածից չես շունչս կ'տամ:

Յես սարսափում եյի քնզնից, բայց սիրում եյի
քեզ, անչափ սիրում:

Սիրում եյի քեզ, վորովհետև իմ սիրտն ել եր դար-
կում այնպես, ինչպես քո ալիքներն՝ ավերիդ, վորով-
հետև իմ յերաղների արյունն ել չեռում եր, այնպես,
ինչպես դու չես յեռում քո անդունդ հատակից:

Դարեր շարունակ ցույց եյիր տվել քո անավոր
աշխարհի դարեր ի վեր ծունկ եյին չողել քո առաջ
մարդկանց անթիվ բաղմունքներն:

Այդպես անկղ եյիր դու:

2.

Տարիները գլորվում եյին, շրջում յերեսներն ու
անցնում: Որերը բացվում եյին, ժպտում կյանքին —
հանգչում: Բայց դու դարձյալ հինն եյիր, դարձյա
հինը:

Ու մի որ, վոր արև եր ու ջերմ, վոր յերկինքը
կապույտ եր ու ջինջ, քեզ ալցի յեկան նոր մարդիկ,
նրանք դիտեցին քեզ, նրանք դիտեցին քո մամա-
նակի ժեռ ավերը:

Դու չ'գիտեյիր ովքեր եյին գրանք, դու չ'գիտեյիր,
վոր դրանք սոցիալիզմ կառուցող աշխարհի ներկայա-
ցուցիչներն եյին: Դու շարունակում եյիր փրփրել,
շանթեր արձակել բերնիցդ ու գոռ ալիքները պոռթկում
եյին ավերիդ մեջ:

Նրանք չերկար խորհեցին քո ավերին, ու նրանց
լուրջ դիմքերին քո դեմ պալաքարելու խոր կոնհուներ
յերևացին:

Դու չ'գիտեյիր այդ:

Դու առաջվա թափով շարունակում եյիր լիդել ա-
փերդ, ու հետ—հետ հրելով քո ալիքները նոր գրոհով
առաջ եյիր շարժվում:

Դո անհարթ ավերի, քարքարոտ թփերի մեջ նրանք
անվերջ պտույտներ արին: Նրանք չափեցին քո ա-
փերը, նրանք չափեցին քեզ՝ քո խորությամբ, քո
ա յնությամբ ու ուժով:

3.

Այդ որն անչափ մարդիկ հավաքվեցին, հեռվից —
հեռվից ել յեկան հավաքվեցին: Յեկան քաղաքներից,
գյուղերից, լուռ սարերի հեռու ու մոտ բնակներից:

Այդ որն եր, վոր առաջին համառ քուսններն իջան
քո կուսակա՛ն ավերին ու վերք առած քո սրտից,
ցավոտ հ' ր հանեցիր դու:

Այդ ու եր, վոր առաջին դինամիտը վորոտաց
քո կրճքում, ու ալդ վորոտն արձագանգ տվեց քո
անդնդախոր մութ ճեղքերում:

Կալքն եր ալդ, մեծ կամքը հնդափայլի:

Որերով ու ժամերով ավերիդ բարձրանում եր մի
չենք: ալդ շենքն իր կառուցողի կամքի նման համառ

հր. Նա փոխեց իր ընթացքը, քո կամքը, քո լերդը
հնի...

4.

Քո սրտից պղնձե թելերի ցանցեր դուրս լեկանե
լեռ ու ձոր կտրելով. գլուղերին հասան: Լարե—լար
թելերը մտան խրճիթներն ու ալնտեղ թափեցին, հեռ-
վից. շատ հեռվից բերած լույսի ելեկտրո-ցնցողները:

Ո՛, լույս, դու միլիոնների մեջ ինձ ել գտար մի
մութ, մի խուլ խրճիթում. քո լույսով կլանք տվիր
ինձ, քո տոկով ցնցեցիր ինձ, վեր բարձրացրիր, նա-
յեցիր աչքերս ու ասիր.

— Դու լու՞լ ես, թմրե՞լ, ո՞վ ո՞չ — դու չես կարող
հետ մնալ որերի մեծ թափից, չես կարող դու չ՝ չլը-
գել —

Իմ լերդը,

Իմ հեքը,

Իմ տեմպը—հաղթական:

ՍՈՑՄՐՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Սրտի խորքից սուլիչը ծվաց, գիլ ու անդադար:

Այդ ծվոցը մրրկվեց ծովի ալիքների պես ու ար-
ձագանդ առավ, տեմպոս անիվներին հաղար ու մի
ճեղքերում:

Անիվները ցնցվեցին այդ ծվոցից ու արագընթաց
պտույտները մեղմացնելով համեստ մրմունջով, դա-
դար առան:

Հանգստի ժամն եր այդ ելեկտրոդորձարանում:

Ամենքը դուրս շտապեցին:

Այդ պահին եր անա, վոր նա դուրս չեկավ լապ-
տաշինարար ցեխից ու կանգ առավ դրան շեմին:

Արևը ժպտաց նրան ու իր վոսկեփալ ցնցողները
թափեց նրա պողպատե ղեմքին ու կարծես մեղմա-
հով քաղցրությամբ արթնացող գարնան կլանքը ներ-
շնչեց ալնտեղ:

Այդ ժամանակ, նա լայն բացեց աչքերն ու այդ
արևյա ցնձողները, չարաճճիորեն թափվեցին նրա
ժպտուն դեմքի բրոնզե թարթիչների տակ ու այդ
կապույտ աչքերում, նոր կլանքի գեղածիծաղ շողեր
փայլեցին:

Յերբ նա շրջեց յերեսը, մեր հայացքները հանդի-
պեցին իրար:

Նա ժպտաց զարնան ժպտով ու չէր ժամօրհն մտ-
տեցավ ինձ:

Նա ալրովում եր ուրախութեան հրով:

Ելելտրոտոկի պես, նա կալավ թևիցս ու մանկան
խնդուսով ակսեց պտուկտներ գործել հետս:

Նա չեր կարողանում հանգիստ առնել, վտտները
շարունակ գետնին եր ծնծում, ծափում եր յերջանիկի
ծափով, նորից առնում թևերս, դարձյալ պտուկտներ
գործում:

— Ի՞նչ ե պատահել քեզ, — հազիվ հանգիստ առա
ու հարցրի լես:

— Մրցանակը, — մրցանակը սոց-մրցման, մենք ենք
տարել, մեր ցեխը, մեր բրիգադան: Այսոր հալտեցին
մեզ, վո՛ւ հարվածայինների մեջ մենք առաջին շար-
քերումն ենք:

Հասկանում ես:

Յես կարող եմ ավելի բարձր ճշալ, միայն թե ի-
մանա՞ս դու այդ, միայն թե հասկանա՞ս ինձ:

Նա դարձյալ, վտտները գետին ծնծեց, դարձյալ
կալանեց թևերս ու իր ստանոկի անիվների պես,
ակսեց պտուկտանալ:

Ո՞հ, ի՞նչքան ուժեղ ե կյանքի խի՞նդը, ինչքան
ժպտերես ու փայլուն:

Սուրիչը դարձյալ ծվաց:

Նա վայրկենապես պոկվեց ինձնից ու դարձյալ
թռչելով, մտավ անիվների ծոցը:

Այստեղ ե խկական շուռչը կյանքի:

Յես շրջվեցի:

Յես ել սառ ներս:

Բալց այս անգամ իմ մեջ խառն էր, սոց-մրցման
խառն:

Այդ խառնը — ուժ եր տալիս ինձ:

Այդ խառնը — խի՞նդ եր տալիս ինձ:

Նրա հետ խնդալու համար:

Ք Ա Մ Ի Ն

Հեռվից, շատ հեռվից ելիր գալիս դու. բլուրները լիզում էիր. իջնում ձորերը. վոլորապտույտ ճանապարհներ էիր կտրում ու գալիս:

Վաղ, առավոտից ել վաղ էլիր գալիս դու:

Անհանգիստ սիրունու պես, պտույտներ էիր գործում խրճիթիս շուրջը, մոտենում, ծեծում էիր դուռս, արթնացնում էիր ինձ ու հետո քաղցր ու սեղմ լերդում սպառնալիս տակ:

Դու քաղցր էիր չերգում, անչափ քաղցր:

Ամեն անգամ քո չերգը լսելիս, ահամա հիշում եմ, թե ինչպես չեղեկներից շվիներ էի շինում ու մենք միասին չիրգում էլինք, իմ շվիի ձայնն էլ քոնի պես ղիլ եր, քոնի պես քաղցր:

Յես սիրում էի քեզ ու քո չերգը:

Դու ալլես միզեղիններ չես ասում ու նուրբ լարերդ թախծոտ չերգեր չես հյուսում ինձ համար:

Մենք վաղուց մանկության ընկերներ էլինք:

Հիշո՞ւմ ես՝ ամեն առավոտ, յերբ դուրս էի գալիս խրճիթից՝ տավարը հանդ տանելու, առաջին՝ գրկողը դու էիր ինձ: Նվում էիր չերեսիս, սանրում ղերուցան մազերս ու քրքրում հագիս ցնցոտիները:

Դու հարածճի էիր, անչափ հարածճի:

Բայց սենք սիրում էլինք միմիանց ու խաղում միասին:

Յերբեմն բարկանում էիր վրաս ու սկսում հալածել ինձ, այդ ժամանակ չես փախչում էի քեզից, թագնվում լեռների ու կիրճերի արանքում: Քարերի ճեղքերից ծածուկ նայում էի քեզ, դու գիժ էիր այդ ժամանակ, խելառ պտույտներ էիր գործում, զարնվում մամռակալած ու սեղան քարերին. հավաքում տերևներն ու ոգում համերգ սարքում, պար բռնում նրանց հետ:

Դու սաքսափելի ու անգութ էիր այդ պահին:

Ձեյիր խնայում ինձ:

Դու հալածում էիր ու հրճվում ինձնով:

Յես չկարողացա տանել քո խենթ հալածանքներն ու մենք խռովեցինք միմիանցից:

Հիշո՞ւմ ես, այն որն անչափ ցուրտ եր սարի հանդում, յես բաժանվեցի քեզից ու փախա քաղաք:

Յես թողի քեզ սարերում, լեռներում:

Դու հալարտ էիր այդտեղ ու անհաղթ:

2.

Դու հետևում էիր ինձ ստվերի պես: Իմացար, վոր խուսափել եմ քեզից, խռովել ու փախել քաղաք:

Դու չեկար քաղաք:

Քեզ տեսա փողոցում:

Դու մտերմությամբ ժպտացիր, նայեցիր աչքերիս ու կարգացիր ինձ:

Մենք ծանոթներ էլինք:

Բայց դու դարձյալ խելառ էիր, քո ժպտում պարծանք ու արհամարանք կար:

Յես խուսափեցի քեզից ու քաշվեցի մի անկյուն: Փողոցը լայն եր ու մեծ:

Քո հորձանքն այստեղ ել ուժեղ եր:

Դու պոկում եյիր հին ու նոր պլակատները, նշա գույներով խաղում, բարձրացնում, պտույտներ գործում ողում ու տանում հե՛ռու... հեռո՛ւ...

Քո պտույտները կամար-կամար բարձրանում—հասնում եյին ռադիո սլոնին ու նրա բարձր դալավիններին նոր ու խելառ յերգեր եյիր հյուսում:

3.

Յես մտա գործարան:

Այստեղ ցուրտ չեր, այստեղ խենթ հալածանքներ չկային:

Բայց դու հետևում եյիր ինձ ու գտար դորձյալ:

Դու չարձձի եյիր ու խորամանկ: Մտել եյիր չար-խերի արանքը—յես քեզ այնտեղ տեսա:

Յես փոխվել եյի, չե՞, դու չճանաչեցիր ինձ:

Յես մրոտ եյի ու սև:

Ժպտի փոխարին, այս անգամ ծիծաղեցիր, մի անտանելի, մի հալածական ծիծաղով:

Յես ծիծաղելի եյի, չե՞:

Բայց դու հիշո՞ւմ ես, այս անգամ յես չխուսափեցի քեզանից, յես արհամարեցի քեզ ու մոտեցա, կյանք տվի չարխերին:

Դու տեսար աչդ, խելառորեն կատաղեցիր, փրփրեցիր ծովախաղ մրրկի պես, պալքարի մտար հաղար ու մի չարխերի հետ, նրանց հետ պտույտներ գործեցիր. խելառ սուլոցներ հանեցիր—բայց իզուր...

Դու անդոր եյիր ու թույլ:

Յես տեսա քո անկարող դեմքն ու մոտեցա, հանաքիստ տվի չարխերին:

Դու մոտեցար ինձ—մենք նորից մտերմացանք:

4.

Մենք սիրում եյինք իրար:

Դու հիմա գալիս ես աշխատանքիս հարվածային ժամերին, պալացուցիչ քաղցրությամբ հովացնում յերակներին յևոացող արյունը, դու հիմա գալիս ես կյանք ներշնչում ինձ, հուզվող կյանք:

Մենք դարձյալ առաջվա պես յերգում ենք միասին, բայց այսօրվա մեր յ'ըլը չի հնչում իմ շինած ցեղեգների սրկնյների բերնից, այսօրվա իմ յերգը մենակ չե լուռ լեռների հեռավոր դալավներում, այս օրվա մեր յերգին բլուր չարխեր են ձայնակցում, այսօրվա մեր յերգը հատու չի, տեմպոտ:

Ո՛հ, չե, մենք սիրում ենք իրար:

ՍԵՎ ՏՂԱՆ

Я —
самый черный из всех.
В детство меня
чернокожей свиньей называли;
За цвет моей кожи
Меня поднимали на смех...
М. Светлов.

1.

Հեռվում. —

Գրկախառնված բլուրների կանաչազարդ հովտում,
փոքրիկ քաղաք: Միմյանց հատող փողոցները լայն ու
հեռադրական թելերի պես չերկար: Ցածկվել փայտե
տներ, և արևից փայլ առած պատուհաններ կեպիի
տակից նայող ժպտուն աչքերի պես:

Զուրը հեռվից, կանաչազարդ ձորերի միջից, կ'ը-
կարկաչե, կ'երգի ջուրը, կ'հոսի դեպի քաղաք:

Լուռ, աղմկազերծ փոքրիկ քաղաք:

Փոքրիկ քաղաքի, մեծ փողոցի փոքրիկ անկյու-
նում — ավտոկայան:

Ամեն չերկուշարթի և ուրբաթ որերին, հեռվից ծուռ
ու մուռ ճանապարհներով հեժալով կզան ավտոներ:

Ավտոկայանը կյանք կառնե, կաղմկե, կժպտա:

Մարդիկ փոքրիկ ու լուռ քաղաքի կնախաքվեն,

կտեսեն նոր մարդկանց: Նոր մարդիկ կբարենն ու
կասեն նոր լուրեր:

2.

Նորից մի որ:

Յերկուշարթի:

Կզա նորից մի նոր ավտո, կբերի նոր մարդիկ, աշ-
խարհի մարդիկ կասեն նոր լուրեր:

Այս անգամ մեծ ավտոն իր հետին կպած կրեթի
մի տղա:

Փոքրիկ դահլիճներ մի տղա:

Նա նման չի լինի այդ փոքրիկ քաղաքի, փոքրիկ
փայտե տների մեջ մեծացող, փոքրիկ տղաներին:

Նա մրտա կլինի, մազերը ցիր ու ցան, սև — ինչ-
պիսի այդ փոքրիկ քաղաքի, փոքրիկ անտառներից բե-
րած սև ածուխը:

Հագին նա կունենա սև ցնցոտիներ, այդ սև ցն-
ցոտիներից կբուրե փոքրիկ քաղաքին խորթ, սև նավ-
թի հոտ:

Գլխին ծածկած կունենա մեծ գլխարկ, նույնպես
սև, նույնպիսի մրտա:

Ավտոն կանգ կառնի: Նա կպոկվի ավտոյից, կը-
բարձրացնի գլխարկը և նրա սև ճակատին կերևան
արծաթափայլ քրտինքի կաթիլներ:

Մարդիկ փոքրիկ քաղաքի կնայեն նրան, վոչ բա-
րի աչքերով, կնայեն շփերին՝ կխոսեն միմյանց
հետ:

— Խուժան ե:

— Հետ պիտի ուղարկել:

Գլխուն մարդիկ, սուր ու խիստ հայացքներ կհա-
ռեն նրա վրա:

Փոքրիկ խուժանի կծպտա ու նրա սև ածուխն դեմ-
քին կփայլեն բրոնզե մի գույշ աչքեր:

Նա խույս կտա չար հայացքներից:

3.

Լալն փողոցի արևոտ մայթերին, վոտարոքիկ կը-
շըրջի սև տղան:

Փոքրիկ քաղաքի փողրիկ տղաները խումբ կկազ-
մեն ու խմբով կաղմկեն խուժանի յեռիկի: Նա կփախ-
չի, կմանի նոր փողոցների, կտեսնի խանութներ և նո-
րանոր շատ բաներ կտեսնի:

Նա կանգ կառնի, կբանա լալն աչքերը, կտեսնի
շատ բաներ, կտեսնի մարդկային նոր աչքեր:

— Հալդե. — կճշա մեկը խանութի ներսից:

— Դեան արի. կխոսի մի ուրիշը հեռվից:

Այդ պահին կծպտա արևի աչքերը սև տղի, ած-
խագուլն դեմքին կենսական զծեր կլերևան, նա կը-
քալի, նա կմոտենա կանչողին:

— Ղոչաղ ես. — կասի կանչողը, — վերջրու կուլին,
լցրու, բեր:

— Հաց կտա չերևի. — կծպտա սև տղան:

Ու հետո, ամեն ուր, վաղ կարթնանա սև տղան,
կարբի դռները խանութի պաղ չուր ցանկելով:

Ու անցան որերը:

Այդ որը նոր գարուն բացվեց լուռ ու փոքրիկ քա-
ղաքի համար: Այդ սրը նոր գարուն բացվեց և իր. —
խուժանի համար:

Մի ճիչ, վոր բարձր եր ու գիլ, մի ճիչ, վոր խրոխա
եր ու հատու, վողողեց քաղաքը, վողողեց ու փոթոր-
կեց լուռթուլը քաղաքի: Յեկան ավտոներ, չեկան
մարդիկ, չեկան յերիխաներ:

Դործարանի բացումն եր քաղաքի:

Դա մի նոր կյանքի սկիզբն եր քաղաքում, իսկ և
իսկ նոր կյանքի սկիզբը:

Մարդկային սավար ջոկատները շրջապատել էին
գործարանը. ու լուռ լուռ էին նրա հատու հեղո-
ները:

Ու այդ որից շատ բան փոխվեց փոքրիկ ու լուռ
քաղաքում: Փոխվեցին մարդիկ, փոխվեց նրանց լուռ
կյանքը, փոխվեց և ինքը սև խուժանը: Փոխվեց ամեն
ինչ, ինչպես փոխվում են ձյունածածկ լեռները գար-
նան արևից:

Ամեն առավոտ նորից ճշում եր սուրիչը, ծխնե-
լույզներից ծխի հաստ շրտիւրը չերկ նը էլին խորա-
նում և ամպիւրի հետ միանալով լուծվում:

Վաղ արշալույսին, առաջին սուրիչը շատերի հետ
արթնացնում եր նաև սև տղին: Նա քայլում եր, նա
շտապում եր դեպի գործարանը: Նա մոտում եր ներս
և այնտեղ ներսում կրակի աչքերը վողջոտում էին
նրան, վողջոտում էին Վանդիկին, Լեոնին, Արսենին:

Նա ձգվում ու կծկվում եր չարխերի մեջ, նա խո-
սում եր նրանց հետ, նրանց հետ ձուլվում մտքով:

Ու մշուշոտ ուղեղում սև տղի, այդ որից նոր մըտ-
քեր ծնվեցին, աճեցին նոր մաքեր պողպատե ու հա-
մառ, նոր մաքեր —

Պալքարի համար:

1010
4287

ՓՈՂՈՅԻ ՅԵՐԳՉՈՒՇԻՆ

1.

Մեծ ու կենդանի, սնդիկի պես շարժուն փողոցը
բոպեխայես խոնվից, և կուտակվից մարդկային մարմին-
ների բազմատարած մի գունդ ստեղծվեց:

Բոլորն ել ձգտում էին մի կետի, վերի շուրջն եր
կատարվում աչդ իրարանցումը:

Ի՞նչ եր պատահել:

Չգիտեի:

Յես ել մոտեցա: Լսվեց զնգուն մի լիրդի մելամաղ-
ձիկ ու գուրեկան, ախորժալուր ձայն մի կանացի:

Յես ել ավելի մոտեցա ու, ճեղքելով շարքերը հե-
տաքերվողներին, կանգնեցի լիրդի ճիշտ դեմը:

Դա նա յեր — փողոցի լիրդչուն:

Նստել եր նա մալթի վրա ու նրա ծնկան վրա
բազմությունն ներշնչած վախից կծկված կուչ եր յեկել
հաղիվ չորս տարիկան մի տղա:

Հուզմունքի շեշտն եր հնչում մելամաղձիկ ու բեկ-
բեկուն. լիրդչունու ախոր դեմքը շառագունել եր ար-
տասովոր կարմրություն: Եւ նրա յերդը կասեք հենց
ինքն եր՝ ծուրմունքի չափ հաճելի, խեղճություն չափ
սոսկալի:

Ամենքն էլ ազահուլթյամբ լսում էին նրան. նա
լուր ձայնի կարողությամբ դուլթել եր բոլորին:

Մահեց և վերջին խաղը հոգեթով նրա լերդի Լուս
նա — փողոցի լիրդչունին: Թախծոտ ու գեղեցիկ աչքե-
րով լիրդեց բոլորին և ապա հայացքն ուղղեց դեպի
փողոցի հեռուն:

Ճրվել սկսեցին: Այս ու այն կողմից մոտենում էին
լիրդչունուն և նրա մոտ փռված թաշկինակի վրա
պղնձյա կամ արծաթյա դրամներ թողնելով, հեռանում
էին:

Փողոցը յուր նախկին դրուժունն ստացավ, կու-
սեք պահ մի առաջ նա չեր տարվել յուր գրկում գո-
սացող ջահել այդ լիրդչունու լիրդով:

Յես լուռ բեկովել էլի իմ տեղում: Ո՞ւր պիտի
շարժվեի — դեռ չգիտեի: Խառը մտքերը համերգ էին
սարքել ուղեղում: Յերբ շրջվեցի, մի շարք նոր մար-
դիկ շրջապատել էին լիրդչունուն: Նա էլ չեր յերգում,
նա լուռ եր: Նորեկները ծանր յերկընտրանքի առաջ
կանգնած մարդկանց դանդաղությամբ, փափալով
խոսել սկսեցին յ'ըրչունու հետ: Մերդչունին խոսում եր
ինձ համար անխելի մի ձայնով և զլխով դրական
նշաններ եր անում:

Ի՞նչ էին խոսում:

Չէի կարող իմանալ:

Չանցած մի քանի րոպե, կանչված կառքը հեռաց-
րեց իմ աչքերից լիրդչունուն՝ իր մանկան հետ: Նրան
տարան այն մարդիկ, վոր նման էին մուլթ ստվերնե-
րի, վոր անխոս էին, բայց համառ...

Ո՞ւր:

Ո՞ւր եր քշվում կառքը:

Դեպի բացվող կյանքի արշալույսը, թե, մարվող
կյանքի մուլթ փլատակները:

Չեչի կարող իմանալ:

2.

Մեծացա մի տարով նո ից:

Փողոցի մայթի վրա կձկված չերզնուն մոռացել
եչի լես:

Մոռացել եչի և այդ փողոցի խանութպան չեչոտ
Վեդոյին:

Մոռացա, վորովհետև չկար այլևս այն խանութը,
վորի դռներն չերբեմնի թիկն տված չերզում եր յերգ-
չունին:

Չեչոտ Վեդոյի խանութի տեղը բանվորական կոո-
պերատիվն եր ճառագայթել, իսկ չերզունին... Անհայտ
եր, թե ո՞ւր եր տարվել:

3.

Անցավ:

Կրին մի տարով ծերացա:

Յերիկո... Մի գեղեցիկ մալխայան չերեկո մեր կո-
լեկտիվը թատրոն ուղարկվեց - մեծ քաղաքի պետո-
պերան:

Շատերի պես յես ել դրավիլ եյի իմ տեղը՝ պատ-
կերապարդ վարագույրն եչի ղիտում և նրա բացվելը
լերադում:

Բացվեց:

Դահլիճը լուռ ու մութն եր:

Դաշնամուրին մոտեցավ մի չերիտասարդ և մատ-
նեը սահլցրեց նրա լեզվակները վրայով:

Կանգնել եր նրա մոտ մի գեղեցիկ և ջահել կին-
կանգնել չերզում եր:

Բաղմաթիվ մարդիկ լսում եին նրան:

Ո՞վ եր նա, չգիտեչի. նրա ձայնը ծանոթ եր ինձ:
Ճգնում եչի վերհիշել ո՞վ լինելն այդ կենսորախ
չերզնուն, վոր կենդանի լուր յերգով թովել եր ամ-
բողջ դահլիճը:

Ու չիշեցի: Դա նա չեր, նա... Չեչոտ Վեդոյի խա-
նութի դռներն թիկնած դալկադեմ չերզունին:

Ահա թե ուր եյին տարել այն անձանոթ մարդիկ:
Միտս թալրտում եր հրճվանքից:

Մինչ այս, մինչ այն, վարագույրն արագորեն
իջավ ու իր չետև առնելով, ծածկեց իմ այլովող հա-
յացքից փողոցի չերզնուն:

Դահլիճում ծափերի վորոտ պոթկաց:

Բացվեց ու փակվեց վարագույրը, նորից բացվեց
ու նորից փակվեց ու բոլորի աչքերն ել դեպի բեմից
յուր շնորհակալությունը ժպտացող չերզնունն եչին
սեկաված: Յես բոլորից շատ եչի ծափահարում, վո-
րովհետև կարծում եչի, թե վոչ վոք ել չեր ճանաչում
չերզնունն, իսկ յես ճանաչում եչի:

Նա փողոցի չերզնունն եր: Խորհրդային կարգերի
փրկած տաղանդը, ցեխոտ մայթերին աննկատ մահա-
ցումից ազատված փողոցի չերզնունն:

Յ Ի Վ Ա

Այնտեղ, ուր բարձր են լեռներն ու քամիները հով, ալիքներ, ուր ամպերը փրփուրն են նման ու չիր-կիրքը լազուր, ալիքներ, վոր մեր հայացքները հանդիպեցին իրար: Մեր հայացքները հանդիպեցին իրար ու մենք ժպտացինք—յես ու դու:

Թե ինչու ժպտացինք—չգիտեմ:

Դատական որենքով դա հանցանք չէր, բայց յես հանցավորի պես յերկա՛ր յերկա՛ր մտածեցի քո մասին, քո ժպտի մասին: Դու կարող եյիր չժպտալ, բայց ժպտացիր, ինչ վոր մտածեցիր ու ժպտացիր: Ահա այդ ժպտի մասին եր, վոր յես յերկա՛ր—յերկա՛ր մտածեցի:

Որերն անցնում եյին, այդ որերի միջ մենք նորից հանդիպում եյինք իրար, դու դարձյալ ժպտում եյիր ինձ, դարձյալ յերեսդ շրջում ու անցնում:

Յես չեյի կարողանում հասկանալ քո ժպտը: Ծաղիկ եր արդյոք այդ ժպտը, թե հեղնանք, սեր եր, թե փաղաքշանք—չգիտեցի:

Բայց յես յերկար չկարողացա տանել քո ժպտը, դա արդեն հալածական եր ինձ համար, ճնշող ու անտանելի:

Համբերութունս հատեցիր դու մի որ, մարմինս ծածկող ցնցոտիներս հավաքած մոտեցա քեզ: Ամա-

չեղ բաց մարմնիցս ու բորիկ վրտներիցս չեյի կարող: Այդպես եր հայրս, այդպես մայրս, այդպես եյի և յես:

Յերը յես մոտեցա քեզ, դու հետ—հետ քաշվեցիր և ուզեցիր ժպտալ: Դու տեսար աչքերս, այնտեղ տեսար և ինձ, քո հասցրած հարվածների հետքերն ու բաց վերքերը տեսար:

Դու լուռ եյիր:

— Յիվա.—շունչ առա յես.—գիտեմ, դու աղայիս աղջիկն ես, գիտեմ, վոր դու շատ—շատ ես բարձր ինձնից:

Քո հաղին դեմքիդ պես պայծառ հազուստ կա և սիրուն մաղիբիդ սև սաթե սանր: Արևը շոհում ե քեզ իր ժպտով, վայլ տալիս ու ոճում իր շողերով:

Դու արևի յես, Յիվա.

Իսկ յես...

Տեսնում ես, վոչինչ չունեմ: միակը, վոր յես ունեյի, այն ել աղբիորեն խլեցիր դու ինձնից, խլեցիր, վոր յես վոչինչ չունենամ, խլեցիր, վոր մոլորեցնես ինձ ու քո խենթ խաղերը խաղաս ինձ հետ:

Դու խլեցի՛ր աղատաբեր կամքն իմ, Յի՛վա:

* *

Վերջալույսի լճակի պես դու խաղաղ եյիր: Լուռ.

— Յիվա, հչաց սիրտն իմ, քո դեմ:

— Սիրում եմ քեզ. պատժիր ինձ,—պատժիր խենթ հովվին, պատժիր նրա համարձակ խենթութունը, պատժիր, վոր նա սլբառ ունի ու այդ սլբառ գիտե բաբախել:

Դու նայեցիր ինձ, նայեցիր ցնցոտիներին, լուս
ժպտացիր և ուզեցիր հեռանալ, բայց նորից շրջվեցիր
ու այս անգամ մարմարե զուլգ շուրթերդ շարժվել
սկսեցին:

Դ՛ուզեցն դեմքիս յերջանկության ժպիտ փալլեց ու
սրտիս բարախումը զսպելով, յես սպասում ելի, թե
ինչ պիտի ասելի: Դու դարձար դեպի ինձ, դարձար
վաղեմի ինձ ծանոթ քո ժպտով:—

— «Միթե դու յեկ գիտես սիրելը — ասեցիր, ու մի
վայրագ քրքիշով հեռացար...

Քո հպարտ հայրը առյուծի պես վորոտաց լեռնե-
րում:

Նա իմացավ իմ մասին, իմ խենթ սրտի բարախ-
ման մասին: Դորդ ամպի սրտից չիլած կայծակի պես
նա կայծակահար արավ մեր բիշեն, այրեց ու քամի-
ներին տվեց:

Նա փոքրիկ անմեղ քրոջս կրակը նետեց ու սպի-
տակահեր չարքաշ հորս, իր խելառ ձիերի սմբակների
տակ ջարդեց:

Յես փախա: Յես փախա շատ հեռու: Իմ սիրած
լեռ՝ երբ ու ձորերը խորթացան ինձ համար ու պաշտառ
փայլերը հանդերի գորշացան աչքերիս: Յես փախա,
բայց վոչ ընդմիշտ, յես փախա, վոր նորից վ՛րադառ-
նամ, անկասկած նորից...


Յեվ չեկա, յեկա, յերբ յես արդեն մենակ չեյի, յե-
կա նրանց հետ, վոր ինձպես փախել ելին, հալածվել,
վոր միշտ ոտար ելին ինձ պես:

Քախտվեց անդորրը լեռների Գիծ, խելառ հողմեր
բարձրացան: Խելահեղ շանթերը սուր պաքներ ար-
ձակեցին ամենուրեք: Պալթեց վորոտադին ցատումով,
տանջանքն ու հալածանքն աշխարհի...

Ուր յերբ վորոտ եր ամենուրեք ու լաց, ճիչ ու
աղմուկ, յես տեսա Յիվային նորից, նա նորից ժպտաց
թույլ ժպտով...

Բայց նոր վորոտի խելառ ձիերը նրան ել տա-
րան:

Նրան ել տարան:



ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

1. Գետի հորձանքների առաջ	64
2. Սոցմրցման խինդը	1
3. Բամին	7
4. Սև տղան	10
5. Փողոցի լերգչուհին	14
6. Յիվա	18
	22

Մեքագրիչ՝ Հ. Սառիեյան

Հանձնված է արտադրության 11/VIII 1932 թ.
 Ստորագրված է պատգրելու 15/XII 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0348774

39877

1933 29 400

Гурген-Овнан

Цива

Госиздат ССРМ Эривань-1933